

Ա. Ղարիբյան

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ*

1950 թվականին լեզվաբանության հարցերի շուրջը «Պրավդայի» էջերում բացված ազատ դիսկուսիայի ընթացքում և դրանից հետո լույս տեսած իր հանձարեղ աշխատություններում Ի. Վ. Ստալինը խորտակիչ հարված հասցրեց Մաոի, այսպես կոչված, «լեզվի նոր ուսմունքին», զարգացրեց մաթեմատիկայի տեսությունը և դրա լույսի տակ վերաքննության ենթարկեց լեզվաբանական գիտության առանցքային հարցերը, այդ գիտության մեջ մտցրեց մասնագիտական մի շարք նոր բովանդակություններ ու ստեղծեց ստալինյան լեզվաբանական ուսմունքի հիմունքները։ Սովետական լեզվաբանությունը դուրս բերվեց փակուղուց և դրվեց զարգացման լայն ուղու վրա։

Ստալինյան հանձարով մերկայացե՛ք Ն. Մաոի, այսպես կոչված, «լեզվի նոր ուսմունքը», որպես ոչ-մարքսիստական ուսմունք, որի դրույթները արմատապես սխալ են և ոչ-գիտական։

Լեզուն հայտարարելով վերնաշենքային կառուցողի, Ն. Մաոյի հավանում էր լուծել լեզվի՝ որպես հասարակական երևույթի՝ էության հարցը, իսկ նրա հետևորդները, որոնց թվում և ես, հավատալով նրա այդ ֆորմուլային, կարծում էինք, թե Ն. Յա. Մաոյի լեզվի, որպես հասարակական երևույթի՝ հարցը լուծել է մարքսիստորեն։

Ընկեր Ստալինը հանձարեղ խորությամբ ու պարզությամբ ցույց տվեց լեզվի և վերնաշենքի արմատական տարբերությունները, նշելով միաժամանակ, որ «Վերնաշենքի սպեցիֆիկ առանձնահատկությունները նրանք են, որ նա հասարակությանն սպասարկում է քաղաքական, իրավաբանական, էսթետիկական և այլ գաղափարներով և հասարակության համար ստեղծում է համապատասխան քաղաքական, իրավաբանական և այլ հաստատություններ։ Իսկ ...լեզուն հասարակությանն սպասարկում է որպես մարդկանց հաղորդակցման միջոց, որպես հասարակության մեջ մտքեր փոխանակելու միջոց, որպես մի միջոց, որը մարդկանց հնարավորություն է տալիս հասկանալու միմյանց և կարգավորելու համատեղ աշխատանքը մարդկային գործունեության բոլոր ոլորտներում՝ ինչպես արտադրության բնագավառում, այնպես էլ տնտեսական հարաբերությունների բնագավառում, ինչպես քաղաքականության բնագավառում, այնպես էլ կուլտուրայի բնագավառում, ինչպես հասարակական կյանքում, այնպես էլ կենցաղում»¹։

Ինչպես տեսնում ենք, մաոյան «տեսությունը» լեզվի վերնաշենքային կառուցողի լինելու մասին սխալ, ոչ-մարքսիստական տեսություն է։

Ն. Մաոյի, հայտարարելով լեզուն դասակարգային, կարծում էր, թե գտել

* Տպագրվում է մաթերի փոխանակման կարգով։ Պատ.

1 Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 92-93։

է լեզվի հասարակական ֆունկցիան, մարքսիստներն լուծել է այդ հարցը՝ նրա հետևորդները, մարքսիզմից անտեղյակ, կարծում էին, թե այս լեզվաբանական հիմնական պրոբլեմը ես ն. Մաուր լուծել է մարքսիստներն: Ընկեր Ստալինը ուսուցանում է. «...լեզվի, որպես մարդկանց հաղորդակցման միջոցի, սպասարկու դերը ո՛չ թե այն է, որ սպասարկի մեկ դասակարգի՝ ի վնաս մյուս դասակարգերի, այլ այն, որ հավասարապես սպասարկի ամբողջ հասարակությանը, հասարակության բոլոր դասակարգերին»¹:

«Լեզուն հենց նրա համար էլ գոյություն ունի, հենց նրա համար էլ ստեղծված է, որպեսզի ծառայի հասարակությանը՝ իրեն ամբողջության, որպես մարդկանց հաղորդակցման գործիք, որպեսզի ընդհանուր լինի հասարակության անդամների համար և միասնական՝ հասարակության համար, որպեսզի հավասարապես սպասարկի հասարակության անդամներին, անկախ նրանց դասակարգային դրությունից»²:

Ինչպես տեսնում ենք, ն. Մաուր լեզվի «դասակարգայնության» ֆորմուլան ոչ-մարքսիստական և հիմնովին սխալ ֆորմուլա է:

Քարոզելով լեզվի՝ պայթյունների միջոցով ստադիալ դարգացման տեսությունը, ն. Մաուր կարծում էր, թե կիրառում է պատմական մատերիալիզմի սկզբունքները լեզվի պատմության հարցերում, իսկ նրա հետևորդները, ինչպես և ես՝ կարծում էինք, թե լեզվի պատմական դարգացման հարցը ես ն. Մաուր լուծել է մարքսիստներն:

Մինչդեռ մերկացնելով ն. Մաուրի «տեսությունը» լեզուների՝ պայթյունների միջոցով ստադիալ դարգացման մասին, Ի. Վ. Ստալինը ուսուցանում է.

«Մարքսիզմը չի ընդունում հանկարծակի պայթյուններ լեզվի զարգացման մեջ, գոյություն ունեցող լեզվի հանկարծակի մահացում և նոր լեզվի հանկարծակի կառուցում»³:

«Մարքսիզմը գտնում է, որ լեզվի անցումը հին որակից նոր որակի տեղի է ունենում ո՛չ թե պայթյունի միջոցով, ո՛չ թե գոյություն ունեցող լեզուն ոչնչացնելու և նորն ստեղծելու միջոցով, այլ նոր որակի տարրերի աստիճանական կուտակման միջոցով, հետևաբար, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով»⁴:

Այսպիսով մաոյան «տեսությունը» լեզվի՝ պայթյունների միջոցով ստադիալ դարգացման մասին նույնպես արմատապես սխալ է և ոչ-մարքսիստական:

Խորտակիչ հարված հասցնելով ն. Մաուրի «ուսմունքին» և մերկացնելով այդ ուսմունքի հիմնական դրույթների արմատապես սխալ և ոչ-մարքսիստական լինելը, Ի. Վ. Ստալինը լուծեց լեզվաբանության հիմնական պրոբլեմները և ճիշտ կողմնորոշում տվեց լեզվաբանական բոլոր հարցերը լուծելու գործում:

Ստալինյան ուսմունքը լեզվի մասին ճիշտ կողմնորոշում տվեց նաև բարբառների ուսումնասիրության հարցերում: Ստալինյան ուսմունքի համաձայն «տեղական (տեղիտորիալ) բարբառները... սպասարկում են ժողովրդական

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 15:

² Նույն տեղում, էջ 17:

³ Նույն տեղում, էջ 61-62:

⁴ Նույն տեղում, էջ 63:

մասսաներին և ունեն իրենց քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆունկցիան»¹։

Ստալինյան ուսմունքի համաձայն ցեղերը և ժողովուրդները ունեցել են «համաժողովրդական, այդ ցեղերի և ժողովուրդների համար ընդհանուր ու դրանց համար հասկանալի» լեզու։

«Իհարկե, դրա հետ միասին եղել են բարբառներ, տեղական խոսվածքներ, բայց դրանց վրա գերիշխել և դրանց իրեն է ենթարկել ցեղի կամ ժողովրդի (народности) միասնական ու ընդհանուր լեզուն»²։

Ստալինյան ուսմունքի համաձայն «բարբառների և ժարգոնների առկայությունը չի ժխտում, այլ հաստատում է համաժողովրդական լեզվի առկայությունը, որի ճյուղավորումներն են հանդիսանում դրանք և որին ենթակա են դրանք»։

Ստալինյան ուսմունքի այդ դրույթներից ելնելով անհրաժեշտություն է զգացվում արմատապես փոխելու բարբառագիտական աշխատանքների մեթոդը։ Դիտելով բարբառներն իբրև համաժողովրդական լեզվի ճյուղավորումներ, ընդհանուր լեզվին ենթակա, բարբառագիտական աշխատանքները պետք է նպատակ ունենան երևան բերելու բարբառների հիմնական տարբերիչ գծերը, ցույց տալով այդ տարբերիչ գծերը որպես ընդհանուր լեզվի երկրորդական ձևեր, բացատրելով դրանց ծագումը ընդհանուր լեզվի ձևերից և ցույց տալով հարազատության այն հիմունքները, որոնք նպաստում են բարբառների ընդհանուր լեզվի մեջ «աղացվելուն»։

Ստալինյան ուսմունքը բարբառների մասին պարտադրում է հայագետներին ևս հայերեն լեզվի փաստերը ուսումնասիրել անկանխակալ կերպով, համեմատել բարբառների փաստերը միմյանց հետ և դրանց առաջացման երևույթները փնտրել իրեն՝ հայերեն լեզվի մեջ։

Ստալինյան ուսմունքի տեսակետից վերաքննելով հայ բարբառագիտական աշխատանքների մեթոդը, տեսնում ենք, որ այդ մեթոդը միանգամայն սխալ է եղել, որովհետև հայ բարբառագիտության տեսական ելակետը եղել է սխալ։ Մառի այսպես կոչված «ուսմունքի» համաձայն, բարբառը երբեմնի անկախ լեզվի վերապրուկ է։ Նրա այս սխալ ֆորմուլան մեզ մոտ, հատկապես իմ կողմից, ըմբռնվել էր այնպես, իբրեւ երբեմնի անկախ տոհմական լեզուները աստիճանաբար խաչավորվելով վերածվել են իրար նման խոսվածքների, բարբառների, իբրև թե ցեղական անկախ լեզուների յուրաքանչյուր խմբի ներսում բոլորի մեջ ընդհանրանում էին յուրաքանչյուր լեզվի բառերի և քերականական ձևերի առանձին մասեր։ Հետևանքը լինում էր այն, որ այդ հարևան լեզուները աստիճանաբար միմյանցից յուրացնում էին առանձին քերականական ձևեր և բառեր և վերածվում էին միանման լեզուների կամ բարբառների։ Ինչպես ես մտածում էի սխալ կերպով, որքան էլ նրանք իրար նմանվում էին, անկախ լեզու լինելու որոշ հետքեր պահպանում էին։ Այս հետքերն, իբրև թե, կազմում էին այն տարբերիչ գծերը, որոնցով մեկ բարբառը առանձնանում էր մյուսից։ Հետևաբար սխալ կերպով կարծվում էր, թե բարբառների մեջ եղած նմանությունները խաչավորման, սինթետիզացիայի հետևանք են, իսկ բարբառների մեջ եղած տարբերությունները նախկին անկախ լեզուների առանձին ձևերի վերապրուկներ են։

¹ Ի. Վ. Ստալին, Բարբառագիտության լեզվաբանության հարցերը, էջ 102։

² Նույն աեղում, էջ 27։

Այս ելակետը թելադրում էր բարբառների հետազոտման ժամանակ՝ ընդհանուր լեզվի համեմատությամբ նրանց մեջ եղած տարբերիչ գծերի բացատրությունը պիտի տվյալ լեզվից դուրս՝ կամ հարևան լեզուների մեջ կամ էլ այդ բարբառների նախորդ, ենթադրյալ անկախ լեզուների մեջ: Իսկ դա հանդեպնում էր սխալ եզրակացությունների. դա չէր օգնում մեր ժողովրդի լեզվի պատմության ուսումնասիրմանը, լեզվական փաստերի ճիշտ մեկնաբանմանը:

Ստացվում էր այն սխալ դրույթը, որ ժողովուրդը իր լեզվի կերտողը չէ, որ ամեն մի լեզու իսկական կարկատան է («մոդարիկա») զանազան լեզուների զանազան տարրերից: Դա հետազոտական աշխատանքի ապակողմնորոշումն էր, սեփական լեզվի ուսումնասիրման ապակողմնորոշումը, որ ստեղծում էր իսկական փակուղի:

Ստալինյան ուսմունքը լեզվի և բարբառների մասին ջախջախեց այդ սխալ ելակետը:

Ինչպես երևաց ստալինյան լեզվաբանական ուսմունքից, մառյան խաչավորման տեսությունը արմատապես սխալ է և հակապատմական: Այդ սխալը ցայտուն կերպով երևում է հատկապես լեզվի ստրուկտուրայի, լեզվի սպեցիֆիկայի էություն մասին ստալինյան հանճարեղ ուսմունքի լույսի տակ:

Ն. Մառը և իր աշակերտները սխալվում էին նաև այն պատճառով, որ նրանք ոչ միայն չգիտեին լեզվի՝ իբրև հասարակական երևույթի էությունը, այլև չունեին լեզվի սպեցիֆիկայի էության պաշարներ:

Լեզվի սպեցիֆիկայի էության գաղափարը մեկն է այն հանճարեղ լեզվաբանական ըմբռնումներից, որոնք կազմում են ստալինյան լեզվաբանական ուսմունքի պատվանդանը:

Լեզվի սպեցիֆիկայի էության ըմբռնումից ելնելով բացատրվում են լեզվի պատմության և բարբառների պատմության բոլոր արմատական հարցերը:

Ստալինյան լեզվաբանական ուսմունքի համաձայն «...լեզվի քերականական կառուցվածքը և նրա բառային հիմնական ֆոնդը կազմում են լեզվի հիմքը՝ նրա սպեցիֆիկայի էությունը»¹:

Ելնելով իր այս մեծ հայտնագործությունից, ընկեր Ստալինը ուսուցանում է. «Լեզվի դիմացկունությունը բացատրվում է նրա քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի դիմացկունությամբ»²:

Եվ քանի որ լեզվի բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը խիստ դիմացկուն են, մշակվում են դարերի ընթացքում և հաջողությամբ դիմադրում են բոնի ասիմիլացիային, այդ պատճառով էլ Ն. Մառի խաչավորման տեսությունը՝ լեզուների սինթետիզացիայի տեսությունը, արմատապես սխալ է և հակագիտական: Լեզուների մեջ կատարվող խաչավորումների հետևանքով չէին կարող ստեղծվել սինթետիկ լեզուներ, քանի որ հաջիթող լեզուն պահպանում է իր քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը:

Ընկեր Ստալինը ուսուցանում է. «Միանգամայն սխալ կլիներ կարծել, որ ասենք երկու լեզուների խաչավորման հետևանքով ստացվում է մի նոր, երրորդ լեզու, որը նման չի խաչավորվող լեզուներից և ոչ մեկին և որակապես տարբերվում է նրանցից յուրաքանչյուրից: Իրականում խաչավորման դեպքում

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 57:

² Նույն տեղում, էջ 58:

լեզուներից մեկը սովորաբար հաղթող է դուրս գալիս, պահպանում է իր քերականական կառուցվածքը, պահպանում է իր բառային հիմնական ֆոնդը և շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով, իսկ մյուս լեզուն աստիճանաբար կորցնում է իր որակը և աստիճանաբար մահանում է:

Հետևաբար խաչավորումը ոչ թե տալիս է ինչ-որ մի նոր, երրորդ լեզու, այլ պահպանում է լեզուներից մեկը, պահպանում է նրա քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը և նրան հնարավորություն է տալիս զարգանալու իր զարգացման ներքին օրենքներով¹:

Նշանակում է՝ անկախ լեզուների խաչավորումներից, չէին կարող բոլոր այդ անկախ լեզուների մեջ ընդհանրանալ յուրաքանչյուրից քերականականորեն էձև, և ապա դրա հետևանքով ստացվեր մի սինթետիկ լեզու կամ լեզվական տարբերակների մի խումբ, մի մոդաիկա: Այդպես չէր կարող լինել, որովհետև կամ դրանցից յուրաքանչյուրը պիտի պահպաներ իր հիմնական բառային ֆոնդը և քերականական կառուցվածքը, ուրեմն բոլոր անկախ լեզուները կպահպանվեին, ուրեմն և բարբառներն էլ այդ ճանապարհով առաջ չէին գա և կամ՝ այդ լեզուներից մեկը կպահպաներ իր քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը, որպես ուժեղ լեզու, իսկ մյուսները իրենցը կկորցնեին, այսինքն՝ ուժեղինը կյուրացնեին: Այդ դեպքում բոլոր լեզուների մեջ կառաջանար ընդհանուր բառային հիմնական ֆոնդ և քերականական կառուցվածք, որը կլինե՞ր մեկինը, հաղթողինը: Ամենաշատը այդ նախկին անկախ լեզուները, յուրացնելով մեկի քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը, կարող էին պահպանել լեզվի այն տարրերը, որոնք դուրս են սպեցիֆիկայի էությունից, այսինքն՝ բառային կազմի որոշ բառեր, ընդհանուր լեզվի հնչյունական սիստեմի կամ արտասանության գանազան տարբերակներ²: Այդքանով միայն նրանք կարող էին պահպանել իրենց ունեցածը հնից: Իհարկե, այդ դեպքում նրանք կդառնային բարբառներ, բայց ոչ թե կարկատանների ճանապարհով, այլ մեկ լեզվից ձյուղավորվելու ճանապարհով:

Հետևաբար, բարբառները հանդիսանում են ընդհանուր լեզվի ձյուղավորումները: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ բարբառները կարող են առաջանալ և առաջացել են ընդհանուր լեզվից կատարվող դիֆերենցիացիայի միջոցով, այսինքն՝ մի լեզվից անջատվելու, առանձնանալու և տարբերակներ ստեղծելու ճանապարհով, որովհետև, ինչպես նշում է Մարքսը, «բաժանվելու մշտական տենդենցը արմատավորված էր տոհմային կազմակերպության տարրերի մեջ, նա ուժեղանում էր լեզվի մեջ տարբերությունների առաջանալու տենդենցով, որ անխուսափելի էր նրանց... հասարակական վիճակի և նրանց կողմից զբաղեցրած տերիտորիայի լայնածավալությամբ առկայությամբ: Թեև բանավոր խոսքը զարմանալիորեն կայուն է իր բառային կազմով և էլ ավելի կայուն է իր բերականական ձևերով, բայց նա չի կարող մնալ անփոփոխ: Տեղադրական անջատումը — տարածության մեջ — ժամանակի ընթացքում համոզեցնում էր լեզվի մեջ տարբերությունների առաջանալուն...»:

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 66-67:

² Տե՛ս Гр. Капанцян, Хайаса - колыбель армян, стр. 161.

³ Архив Маркса и Энгельса, т. IX, стр. 79. Госполитиздат, 1941. (Курсив Маркса).

Այս երկու պրոցեսները տեղի են ունեցել, իհարկե, տարրեր պայմաններում և տարբեր ժամանակամիջոցներում: Դիֆերենցիացիայի միջոցով բարբառների կազմվելը տեղի էր ունենում տոհմատիրական կարգերում, երբ ցեղերը կոտորակվում էին, բաժան-բաժան լինում: Կատարվում էր նաև հակառակ պրոցեսը, երբ ցեղերը, ազգակից կամ անազգակից, գարերի ընթացքում միավորվում էին ու կազմում ժողովուրդներ:

Դժվար է հիմա որոշել, թե որևէ լեզվի ո՞ր բարբառներն են առաջին շրջանում դոյացել, ո՞ր բարբառները՝ երկրորդ շրջանում: Չի կարելի շհամաձայնել նաև այն կարծիքին, թե այդ երկու պրոցեսները կարող էին տեղի ունենալ նաև միաժամանակ: Չի բացառվում այն հանգամանքը, որ մի լեզվից ճյուղավորված որևէ բարբառ մի քանի ցեղական լեզուների միջավայրում հանդիսանար ուժեղը, խաչավորման պրոցեսում պահպաներ բառային իր հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը, իսկ ցեղական լեզուները կորցնեին իրենց որակը և յուրացնեին այդ բարբառի որակը, այսինքն՝ բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը, և վերածվեին հաղթող բարբառի, ուրեմն և նրա (հաղթող բարբառի) ընդհանուր լեզվի բարբառների կամ ենթաբարբառների: Հենց այժմ մեզ հայտնի է, որ հայերեն լեզվի հետ խաչավորվող գնչուների լեզուն յուրացրել է հայերենի քերականական կառուցվածքը, բայց լենինականի բարբառինը. օրինակ՝

ԳՆՇՈՒՆՆԵՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՐԲԱՐԱՌՈՎ

վէսէմ ¹ կր	վէսէի կր	նստէմ կր	նստէի կր
վէսէս կր	վէսէիր կր	նստէս կր	նստէիր կր
վէսէ կր	վէսէր կր	նստէ կր	նստէր կր
և այլն	և այլն	և այլն	և այլն

Այսպիսով՝ բարբառները ընդհանուր լեզվի ճյուղավորումներն են և, հասկանալի է, որ նրանց բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը մի լեզվինն են, ընդհանուր լեզվինը: Քերականական կառուցվածքի յուրաքանչյուր երևույթ բարբառների մեջ պետք է կապել ամենից առաջ ընդհանուր լեզվի հետ, նրա բացատրությունը պետք է փնտրել ընդհանուր լեզվի մեջ և ցույց տալ այն ճանապարհը, որով ընդհանուր լեզվից ճյուղավորվելով առաջացել է այս երևույթը: Ուրեմն մեր բարբառների որակի երևույթները րննելիս՝ պետք է կապել դրանք հայերեն լեզվի ընդհանուր երևույթների հետ:

Ինչպես տեսնում ենք, բարբառագիտական հետազոտությունը ամբողջ մեթոդը շուտ է դալիս՝ տրամադծորեն հակառակ նախորդին: Այդ մեթոդը կիրառելով հայ բարբառների դասակարգման պրոբլեմը քննարկելիս՝ հետաքրքրական արդյունքների ենք հասնում:

Լեզվի ստալինյան ուսմունքի լույսի տակ բարբառների դասակարգումը դիտական հիմնավորում է տալիս այն սկզբունքին, որ հայերենի բարբառները ընդհանուր հայերենի ճյուղավորումներն են: Գրականության մեջ հայ բարբառների դասակարգման հարցը առաջացել է համարյա հայ բարբառագիտության առաջացման հետ մրասին: Հայ բարբառագիտության սկիզբը պետք է համարել ուղիղ հարյուր տարի առաջ Դ. Հախվերդյանի «Սոցաթ-Նովայ»² աշխատ-

¹ «Վէսէյ» նշանակում է նստել:

² Սոցաթ - Նովայ լույս է տեսնում աշխատությունների ժողովրդական լեզուների մասին: Մոսկվա, ի տպարանի Վյատկիմիրայ Կոտիկ, 1832:

տության լույս ընծայումը՝ Մոսկվայում: Այս աշխատության մեջ առաջին անգամ համեմատաբար ընդարձակ ծավալով նկարագրված է մեկ հայ բարբառ՝ Թրիխսի բարբառը:

1866 թ. Ա. Այտրնյանը աշխարհարար լեզվի իր հետազոտությունների մեջ որոշ տեղ տվեց նաև հայ բարբառներին. բայց քանի որ իր ժամանակ Թրիխսի բարբառից բացի ուրիշ որևէ բարբառ ուսումնասիրված չէր, ուստի բարբառների մասին գաղափար կազմելու համար անհրաժեշտություն զգաց զրանք խմբավորել ընդհանուր կարգով: Նա չկարողացավ բարբառների խմբերի ընդհանուր գծերը գտնել կամ այդ ընդհանուր գծերի հարցը դնել, ուստի բարբառները դասակարգեց ըստ տեղի, այսինքն՝ աշխարհագրական սկզբունքով՝ նրա դասակարգումը հետևյալն է.

ա) միջ գո. Հայաստան — (Վան, Միջագետք, ևն).

բ) Կոստանդնուպոլիս — Փոքր Ասիա.

գ) արևմտեան Լեհաստան — Առտեալ.

դ) արևելեան. Հաշտարխան — Պարսկաստան, որ կձգուի Թուսաստանէն մինչև Հնդկաստան:

Հաջորդ դասակարգողը Բ. Պատկանյանն է, որն ասում է հետևյալը.

«Несколько выше мы говорили, что все разнообразные наречия и говоры армянского языка можно разделить главным образом на две группы: восточную и западную. Отличительным признаком первой служит местный падеж (locativus), на ում, քմ, ամ, во второй группе сходный с именительным падежом или образуемый посредством предлога մէջ, և. Далее настоящее и прошедшее время изъявительного наклонения в восточной группе сложны, и состояются из окончания *местного падежа*, приставленного к корню глагола, с присоединением существительного глагола, а в западной — посредством частичек կու, կր, կի, կ', приставляемых к этим же временам гайканского языка, без посредства вспомогательного глагола. Эти частички կու, կր, կի, կ' в восточных диалектах образуют будущее время».

Ինչպես տեսնում ենք, Բ. Պատկանյանի դասակարգման սկզբունքն աշխարհագրական է (արևելյան, արևմտյան). Եթե նա հիշատակում է այդ բարբառների տարբերիչ գծերը, ապա այդ կատարում է իրեն բացատրություն աշխարհագրական դասակարգման: Աշխարհագրական դասակարգումից վերջնականապես հրաժարվեց պրոֆ. Հ. Աճառյանը, որը 1969 թ. բարբառները դասակարգեց ըստ նրանց ձևաբանական հատկանիշի: Հ. Աճառյանը իր վերջին աշխատության մեջ ևս իր նախկին տեսակետը պաշտպանում է և գանում է, որ մեր բարբառները բաժանվում են երեք ճյուղերի՝ «ում», «կը» և «լ»:

«ում» ճյուղի մեջ դասավորում է յոթ բարբառ՝ Երևանի, Թրիխսի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի կամ Թավրիզի, Զուղայի և Ագուլիսի:

¹ Ա. Այտրնյան, Քննական բերականություն արդի հայերեն լեզուի. Նախաշարիչ. 1866, Վիեննա, էջ 166:

² К. Патканов, Исследование о диалектах армянского языка, 1869, стр. 17.

³ Classification des dialectes arméniens par H. Adjarian. Paris, 1909.

⁴ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. II, 1951:

«Կը» ճյուղի մեջ դասավորում է 24 բարբառ՝ Կարնո, Մշո, Խոտրջուրի, Վանի, Տիգրանակերտի, Խարրերդի և Երզնկայի, Շապին-Դարահիսարի, Տրապիզոնի, Համշենի, Մալաթիայի, Կիլիկիայի, Արարկիրի, Ակնա, Սեբաստիայի, Եվդոկիայի, Ամասիայի, Օրդուի, Ջմյուռնիայի, Նիկոմիդիայի, Պոլսի, Ռոդոսի, Ղրիմի, Արտիալի և Սվեդիայի:

«Էլ» ճյուղի մեջ դասավորում է 5 բարբառ՝ Մարաղայի, Արդվինի, Հավարիքի, Խոյի և Մեղրու:

Եթե մոտիկից ծանոթանանք բարբառների այս դասակարգմանը, անհրաժեշտություն կզգացվի մի շարք փոփոխություններ կատարել:

Ինչպես ասացինք, պրոֆ. Հ. Աճառյանը «Էլ» ճյուղի մեջ զետեղել է Մարաղայի, Արդվինի, Հավարիքի, Խոյի և Մեղրու բարբառները: Սակայն լեզվական փաստերը ցույց են տալիս, որ դրանք պատկանում են երկու տարբեր ճյուղերի: Վերցնենք Հ. Աճառյանի բերած օրինակները.

Մեղրի	Մարաղա	Արդվին	Հավարիք	Խոյ
սիրիս իմ	ուզէլ իմ	խօսէլիս իմ	գրէլիս ըմ	թալէս եմ
սիրիս իս	ուզէլ իս	խօսէլիս իս	գրէլիս ըս	թալէս ես
սիրիս ի	ուզէլ ի	խօսէլիս է	գրէլիս ի	թալէլ ի

Ինչպես տեսնում ենք, այդ բարբառների ներկայի կազմությունները տարբեր են միմյանցից: Նախքան համեմատելը, մենք մտցնենք մի ուղղում. Խոյի բարբառ ասածը պետք է հասկանալ Սալմաստ-Ուրմիայի բարբառ, որտեղ ասվում է՝ ասլս եմ, ըսնլս եմ, րալլս եմ: Բուն Խոյում ասվում է՝ ասլլ եմ, ըսնլլ եմ, րալլլ եմ:

Մեղրու բարբառում ներկան կազմվում է «ս» վերջավորությունն ունեցող մասնիկով և այդ բարբառում չկա որեւէ ձև, որի մեջ «լ»-ն լինի ոչ միայն բառավերջում, այլ նաև դերբայի միջում, ինչպես Արդվինի բարբառում է:

Պարզ է, որ այդ բարբառը չի կարելի դասել Մարաղայի հետ միևնույն ճյուղի մեջ, որովհետև Մարաղայի անկատար դերբայի վերջավորությունը «լ» է:

Մեղրուն նման են Կարճեանի, Հաղուրի, Շաղախի բարբառները, ուրեմն դրանք որեւէ ձևով «Էլ» ճյուղի հետ կապել հնարավոր չէ: «Էլ» ճյուղի հետ այդ բարբառները կապվում են միայն մի ենթադրությամբ, որ դրանք առաջացած են «ալիս-լիս» ձևերի սղումից: Այդ «ալիս-լիս» ձևերը առկա են Արդվինի բարբառում և Հավարիքի բարբառի առաջին դեմքում (մնալիս, գրբլիս), այլև Սալմաստ-Ուրմիայի բարբառի ժխտական ձևերի մեջ, բայց այդ ձևերի մեջ սղված է «ս»-ն (չեմ կլիբլի, չեմ կթալի): Որովհետև Արդվինի բարբառի դրական ձևերի (գրբլիս, կարթլիս) մեջ «ս»-ն առկա է, իսկ ժխտական ձևերի մեջ «ս»-ն ընկնում է (չիմ գրբլի, չիմ կարթլի), ուստի հետադարձ ենթադրությամբ Սալմաստ-Ուրմիայի «կլիբլի» ձևը պետք է որ առաջացած լինի «կիրիլիս» ձևից:

Դրանից էլ եզրակացվում է, որ Մարաղայի բարբառը (կլիբլի իմ) և մեր առաջարկած Խոյի բարբառը (կրլլլ եմ) առաջացած պետք է լինեն «կիրիլիս» ձևից, եզրակացնում են, թե անկատար դերբայում «լ» վերջավորությունն ունեցող բարբառները պատկանում են «Էլ» ճյուղին, ուրեմն «ալիս-լիս» վերջավորությունն ունեցող բարբառներն էլ պետք է որ պատկանեն «Էլ» ճյուղին:

Բայց պրոֆ. Հ. Աճառյանն ասում է. «Մինչդեռ Մարաղայի բարբառը ներկայի բուն կազմելու համար առնում էր անորոշի բունը (այսինքն կիրիլ

իմ, կ'իրիւ իս, կ'իրիւ ի — Ա. Ղ.) Արդվինի բարբառը այդ անորոշի վրա ազդեցություն է նաև «իս» մասնիկը և խոնարհում է էական բայի հետ. ինչպես՝ խօսելիս իմ, փնտրելիս եմ»¹:

Եվ իրոք՝ ակադեմիկոս Հ. Աճառյանի սկզբունքով յուրաքանչյուր բարբառի ճյուղը որոշվում է նրա ներկայի կազմությամբ: Այդ սկզբունքի մեջ չի ասվում, թե ճյուղը որոշելիս պետք է ծագումն էլ նկատի առնել, որովհետև այդ դեպքում բարբառների դասակարգումն ըստ ճյուղերի անմիտ կլիներ, քանի որ ըստ ծագման բոլոր բարբառները ընդհանուր հայերենից են: Պարզ է, որ ճյուղերի բաժանման ժամանակ պետք է նկատի առնել նրանց այսօրվա կազմության ձևը: Այդ դեպքում Հ. Աճառյանի առաջարկած «էլ» ճյուղի մեջ մենք կունենանք երկու ճյուղ՝ «լ», որին պատկանում են Մաբաղան և Խոյը, և «ս», որին պատկանում են Մեղրու, Կարճևանի, Հաղբուրի, Շաղախի, Արդվինի և Սալմասա-Ուրմիայի բարբառները:

Այս երկու ճյուղերից «ս»-ի հարցը պարզ է: Այս ճյուղի բոլոր բարբառների լրիվ ձևն ունեցել է «ալիս-էլիս» վերջավորություն, որի անցման բոլոր ձևերը մենք ցույց ենք տվել դեռ 1939 թ. (Արդվին՝ մնալիս, Շաղախ՝ մնալիս, Կարճևան՝ մնալս, Մեղրի, Հաղբուր, Ուրմիա՝ մնաս):

Այս բոլոր բարբառները իրար հետ միանում են անկատար դերբայի «ս» վերջավորությամբ, ուստի կոչվում են «ս» ճյուղի բարբառներ: Մենք այժմ հայտնաբերել ենք երկու նոր բարբառ ևս, որոնք մի կողմից հարստացնում են «ս» ճյուղի բարբառները, մյուս կողմից երևան են բերում այդ ամբողջ ճյուղի տիպիկ գծերը: Այդ բարբառների հետազոտությունը ցույց է տալիս, որ մեր բարբառային ճյուղերից ամենաուժեղ արտահայտվածը «ս» ճյուղն է: «Ս» ճյուղի բարբառներից ամենահետևողական ներկայացուցիչը Լարադաղի բարբառն է, որ մի տեսակ «մայր» բարբառ է՝ նրա մեջ կան «ս» ճյուղի բոլոր հատկությունները² («ալիս-էլիս» վերջավորությունը, անցյալի ձևերը առանձին բառով կազմելը, անցյալ կատարյալի բացակայությունը, վաղա՛յատարի գործածությունը իբրև անցյալ կատարյալ, հարակատարի գործածությունը վաղակատար և հարակատար իմաստով, անտեղաշարժ բաղաձայնական սիստեմ):

Մինչդեռ «լ» ճյուղի բարբառները «ս» ճյուղին միայն մի կետով են նման. անցյալի ձևերը կազմում են «էր» բառ-մասնիկով: Մյուս բոլոր հատկություններով նրանք «ս» ճյուղի հետ որևէ կապ չունեն: Բացի այս, «լ» ճյուղի և «ս» ճյուղի բարբառների անկատար դերբայները առաջացել են հայերեն ընդհանուր լեզվի տարբեր ձևերից:

Ինչպես ասացինք, «ս» ճյուղի անկատար դերբայի լրիվ ձևերն ունենում են «ալիս-էլիս» վերջավորությունները (մնալիս, գրելիս), որոնք ժամանակակից հայերենի անկատար դերբայի զուգահեռ ձևերն են (գրում-գրելիս, մնում-մնալիս): Այս ձևերը դեռ գրաբար լեզվի մեջ գոյություն ունեին, սակայն տարբեր իմաստով: Նրանք գոյական դերբայներ էին, համարյա հավասար ենթակայական դերբային: Այսպես՝ գրաբար լեզվի մեջ «գրելիք», «մնալիք» նշանակում էին «գրողներ», «մնացողներ»: Եզնիկի մոտ մենք ցույց ենք

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. II, 1951, էջ 357—358:

² Известия АН СССР, Отделение литературы и языка, вып. 3, 1952.

տվել հետևյալ հատվածը. «Եթե Աստծոյ կամօք գործէին այնպիսի աշարիք, ընդէր ի գործելեաց շարեացն վրէժս պահանջէ»¹: «Զի եթէ խոփ և դերանդի և մանդաղոր գործիցէ, ի բարւոր իրս պաշտեցաւ, ապա եթէ սուսեր և զեղարդ և սլաք, և այլ ինչ ղէն, որ վնասակար մարդկան է, գործ շարութեան գործէ. և պատճառ շարութեան գործելին և ոչ երկաթն»² (ընդգծումները մերն են — Ա. Ղ.):

Այստեղ, ինչպես տեսնում ենք, գործելիք (գործելեաց շարեացն) նշանակում է գործողներ, գործելի նշանակում է գործող:

Այս ձևի տվյալ իմաստը ղեռ մինչև հիմա էլ պահպանված է ունելի, լսելի, հոտոտելի, հաշակելի և այլ բառերի մեջ, որոնք նշանակում են բռնող, լսող, հոտոտող, հաշակող (գործիք, օրդան) և այլն:

Այս ձևերի հոգնակի հայցական հոլովը կլինի գործելիս, ունելիս, լսելիս, ոտելիս, հաշակելիս և այլն: Դրա լավագույն օրինակը գտնում ենք Բուդանդի հետևյալ տողերում.

«Իսկ ինքն թաղաւորն դնացեալ ի լալիսն, նստեալ լացր զեղբօրորդին իւր. դոր ինքն եսպան»...

Իսկ թաղաւորն Արշակ ի լալիսն տեսանէր ղկէնն սպանելոյն»³:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ի լալիս ձևը նշանակում է «լացողների մեջ». օժանդակ բայի հետ միասին այդ ձևը կտա «ի լալիս եմ» այսինքն՝ լացողների մեջ եմ լալիս եմ, ուրեմն՝ մնալիս եմ — ի մնալիս եմ — մնացորդների մեջ եմ — մնում եմ, ի զրելիս եմ — զրողների մեջ եմ — զրում եմ և այլն:

Ներդրական հոլովի առումով էլ արտահայտվում նաև «ում» ճյուղի դերբայը՝ զրում, խոսում, լսում և այլն:

Նշանակում է «ս» ճյուղի բարբառները ճյուղավորվելիս ներկայի գաղափարը արտահայտելու համար տսել են՝ գործողությունը կատարողների մեջ լինել:

«Է» ճյուղի բարբառները նույն բանը արտահայտել են անորոշ դերբայի հայցականով՝ ի մնալ եմ, ի զնալ եմ և այլն, որ նշանակում են՝ մնալու գործողության մեջ եմ, զնալու գործողության մեջ եմ, այսինքն՝ մնում եմ, զնում եմ: Գրաբարում, ավելի հաճախ միջին հայերենում, այսպիսի ձևերով արտահայտվել է ներկայի պաղափարը (ի դալ — դալիս, ի հավատալ — հավատում, ի կովել — կովում):

Պարզ է, որ դրանք երկու տարբեր ճյուղեր են, և որևէ հիմք չկա այդ ճյուղերը մեկ համադրելու եթե նույնիսկ ընդունենք, թե նրանց ծագումը ընդհանուր է, նրանց ներկա վիճակը այնքան տարբերակված է, որ դրանք իրար հետ խառնելը, մի ճյուղ համարելը դիտությունը որևէ օգուտ չի տա: Հենց դրանք միմյանցից անջատելը նշանակում է բարբառները ընդունել որպես ճյուղավորումներ: Ուստի մենք ունենք ոչ թե «էլ» ճյուղ, այլ «ս» ճյուղ և «լ» ճյուղ:

«Կը» ճյուղի բարբառների մեջ մտցված են 24 բարբառ:

Այդ «կը» մասնիկի մասին կան շատ կարծիքներ: Ա. Այտընյանը կարծում

¹ Եղնրկա Կողբացոյ «Եղծ աղանդոց», էջ 26:

² Նույն տեղում, էջ 28:

³ Փ. Բուդանդ, էջ 102:

⁴ Մ. Արևիկյան, Հայոց լեզվի տեսություն, 1931, էջ 322:

է որ դա «կառ» կապակցութիւնից է¹: Մ. Աբեղյանը կարծում է, որ դա զոյ
նոյ բառից է, որ նշանակում է «ահա»²:

Քննենք այդ հարցերը ևս:

Ընդհանուր լեզվից ճյուղավորվելիս մեր բարբառները առել են նրա հիմ-
նական բերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը:

Պահպանելով ընդհանուր լեզվի բերականութեան հիմքերը՝ բարբառները բե-
րականական մանրամասնութիւնների մեջ որոշ տարբերակում են մտցրել,
եւ թիւն է հին ընդհանուր լեզվի տվյալ բերականական կատեգորիայի անկա-
տարութիւնից: Ընդհանուր լեզվի տվյալ ձևի անկատարութիւնը կամ երկ-
վութիւնը թելադրում էր ճյուղավորվող բարբառներին որոշ դեպքերում ընտ-
րութիւն կատարել կամ նոր ձևեր ստեղծել նույն հայերենի մատերիալից:
Այդ դեպքում ընդհանուր լեզվի երկիմաստ ձևին տալիս էին մեկ հաստա-
տուն իմաստ, իսկ մյուս իմաստն արտահայտելու համար ստեղծում էին նոր
ձևեր:

Հայտնի է, որ զրաբար լեզվի ներկան և անցյալի անկատարը երկիմաստ
են եղել. մեկ դրանք նշանակել են սահմանական եղանակի ներկա և անցյալի
անկատար, երբեմն էլ դրանք նշանակել են ըղձական եղանակի ապառնի և
անցյալի ապառնի³:

Հայերեն բոլոր բարբառները զրաբարի ներկայի և անցյալի անկատար
ձևերը վերցրել են ըղձականի իմաստով, որ նշանակում են ապառնի և անցյա-
լի ապառնի: Բայց անհրաժեշտ է եղել տարբերակել ներկան ապառնիից և
անցյալի անկատարը ըղձական ապառնի անցյալից:

«Ում» ճյուղի բարբառները այդ նպատակով օգտագործել են հայերենի
ներգոյական հոլովը, և դրանից առաջացել է զնոււմ, խոսում դերբայը, իսկ հին
հայերենի ներկայի և անցյալի անկատար ձևերը թողել են իբրև ըղձականի
ձևեր:

«Ը» ճյուղի բարբառները այդ նույն նպատակով օգտագործել են անորոշ
դերբայի հայցական հոլովը ներգոյական իմաստով, ինչպես երևում է միջին
հայերենում, ի զնալ եւմ — զնալ եմ — զնում եմ, ի զրել եւմ — զրել եմ — զրում եմ
իհարկե զրաբարի ներկայի և անցյալի անկատարի ձևերը նույնպես պահպա-
նելով որպես ըղձականի ձևեր: Թե «ում» ճյուղի և թե «ը» ճյուղի բարբառները,
որպեսզի ցույց տան, թե արտահայտում են գործողութեան կատարումը
ու թե ապագայում, այլ այս, ներկա մոմենտին, վերցրել են դերբայական ձևը
ներգոյական իմաստով, այսինքն՝ զործողութիւն մեջ լինելը, որովհետև ներ-
կան հենց ցույց է տալիս «լինել գործողութեան պրոցեսում», «լինել գործողու-
թեան մեջ»:

«Ս» ճյուղի բարբառները նույն նպատակով, զրաբարի ներկայի և անցյալի
անկատարի ձևերը նույնպես պահպանելով իբրև ըղձական, ներկայի դա-
դալարը արտահայտել են մի առանձին իմաստով՝ «գործողների մեջ լինել»
առումով՝ ի զնալիս եւմ — զնալիս եմ, — զնում եմ, ի զրելիս եւմ — զրելիս եմ —
զրում եմ: Որ իսկապես զնալիս, զրելիս ձևերը ներգոյականի իմաստ ունեն այդ

¹ Ա. Այտրեան, Քննական բերականութիւն արգի հայերէն լեզուի. Քերական-
ութիւն, 1866, էջ 75—78:

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, 1931, էջ 323—336:

³ Նույն տեղում, էջ 316—318:

ցույց է տալիս Հավարիքի բարբառը, որ առաջին դեմքում ասում է՝ զուլիս րմ, երկրորդ և մյուս դեմքերում ասում է՝ զուլըմ ևս, գրելըմ ա, ուրեմն՝ գրելիս — գրելում:

Տարբեր ձևով են վարվել «կը» ճյուղի բարբառները: Նրանք օգտագործել են «գոյ» բառը, որ նշանակում է: «կա» (գոմ, գոս, գոյ — կամ, կաս, կայ), ոտավելացնելով գրաբարյան ներկայի ձևի վրա՝ ցույց են տալիս թե գործողությունը ոչ թե կատարելիք է, ըզձական, այլ հիմա կու: Դրանից ստացվել է գոյ գրեմ ձևը:

Միջին հայերենում գիտենք, որ գոյ արտասանելու համար պետք է եղել գրել կոյ, քանի որ միջին հայերենի խոսվերը արտասանվել են ձայնեղ: Այսպիսի օրինակի մենք հանդիպում ենք միջին հայերենի ողջ գրականության մեջ:

«Վաճառականք ղիւրեանց գլուխն մահու կոյ դնեն և ապա ի ծովն կոյ տնոյն»: «Մարգարիտն ի ծով կոյ լինի»... «վաղվնէն երբ որ ի քնուն վեր կոյ ելնուն, նայ մենք ի դուռն կու նայինք, որ զհետ կոյ տեսնունք. ի հետ հօտին կոյ երբանք, գառն կամ ոչխարն զինչ որ կոյ հանդիպի, նայ կոյ առնունք»¹:

Հայտնի է, որ դեռ միջին հայերենում «ոյ» երկհնչյունը բառավերջում արտասանվում է «ու», օրինակ՝ գրելոյ — գրելու, մնալոյ — մնալու, գինւոյ — գինու, եկեղեցւոյ — եկեղեցու: Եվ հայտնի է, որ այդ պրոցեսը բոլորովին ձևավորվեց աշխարհաբարում, և այժմ մեր ժամանակակից լեզվի մեջ «ոյ» երկբարբառի դիմաց բառավերջում ունենք «ու»: Ուստի գրաբարի և միջին հայերենի «ոյ» հոլովման լատերի մի զգալի մասը վերածվեց «ու» հոլովման (մարդոյ — մարդու, խմելոյ — խմելու): Պարզ է, որ «կոյ» ձևը պետք է դառնար «կու», որը «կը» ճյուղի միավանկ բառերում այժմ էլ պահպանվում է (կուկլամ, կուքամ և այլն): Մեր վերևը բերած տեքստի մեջ այդ փաստը կա (կու նայինք):

Այդ կու ձևը որոշ բարբառներ պահպանել են «դու» ձևով, որովհետև բարբառային հնչյունական սիստեմի մեջ խուլեր չունեն. օրինակ.

Տրապիզոնի բարբառ՝ սիրէմ գու, սիրէս գու և այլն:

Ակնա բարբառ՝ գու սիրէմ, գու սիրէս և այլն:

«կու» ձևը բայի հետ միանալով սղման է ենթարկում «ու» ձայնավորը, որից ստացվում է «կը» (կըգրէմ, կըսիրէմ, գրէմ կը, խօսիմ կը):

Մի քանի բարբառներ պահպանել են ուղղակի գո — գոյ ձևը: Օրինակ՝ Կյուրիկի ենթաբարբառ՝

Բագը ձուռէ, գովը դաթ գո չի դար:

Գաղու շեղած մուգ գո բռնէս:

Մեյմէդի միս գուդէն գո:

Ես գո գերթամ ձօրն ի վեր¹:

Այս ենթաբարբառի մեջ չի նկատվում, որ «ու»-ն վերածվի «օ»-ի, որպեսզի ենթադրենք, թե «գո» ձևը կու > գու ձևի հնչյունափոխության հետևանք է:

Սակայն «կը» ճյուղի բոլոր բարբառները չէ, որ «գոյ» մասնիկն են ընդունել ներկան արտահայտելու համար: Կան բարբառներ, որոնք ներկան արտահայտելու նպատակով՝ ընդհանուր լեզվից ճյուղավորվելու պրոցեսում ըզձական ձևերից տարբերելու համար ընդհանուր հայերենի ներկայի և անցյալի

¹ Վ ա Ր դ ա ն Ա յ գ ե կ ց ի, Վասն խառնոց աղուէսուն և չարութեան նորայ, Տես և Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, 1932, էջ 323—336:

² Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայ բարբառագիտութիւն, 1911, էջ 217:

անկատարի ձևերի վրա ավելացրել են «կա» մասնիկը, որը «կայ» բառն է (եամ, կաս, կա): Դրանից ստացվել է «կա գրեմ», «կա խօսիմ», կա բերիմ» և այլն: Այսինքն թե՛ «գրելս կա», «խոսելս կա», «բերելս կա»:

Այս բարբառներից և խոսվածքներից են՝ Ամասիայի բարբառ՝ կերքամ կա, կուզամ կա, նստիմ կա և այլն:

Տերենդեի ենթաբարբառը՝ Զի հավնած մարդ շօրե գուրցէ գա...

Կեսարիայի ենթաբարբառը՝ Առչըվնին իրէ՛ք դաւրվան բրլուզ դղա մը առէլ գա գուղեն...

Ասված ընծը շոջուխ գա չի դար... գա գիտենաս, գա փշե... գա գուլան, դա մուրա, գա թափնէն»¹:

Բարբառում չի նկատվում, որ «ու»-ն վերածվում է «ա»-ի, որպեսզի ենթադրենք, թե պարզ հնչյունափոխության հետևանքով կու—գու ձևը վերածվել է «դա» ձևի:

Հաճընի, Մարաշի և Զեյթունի բարբառների «գօ» և «դո» ձևն էլ առաջացել է «կա» ձևից, որովհետև այդ բարբառներում ա-ն շեշտի տակ արտասանվում է «օ» կամ «ուէ»—ո (օրինակ «ինչ գո, ինչ շօգո» — ի՞նչ կա, ի՞նչ չկա):

Նշանակում է «կը» ճյուղի մեջ համարված բարբառների մի մասը պատկանում է «կա» ճյուղին:

«Գոյ» և «կայ» բառերը նրա համար էին, որպեսզի ցույց տային, թե գործողությունը ահա կատարվում է: Նրկուսն էլ իրենց իմաստով հավասար են «ահա» բառին²: Եվ իսկապես՝ Ուրմիայի, Խոյի և այլ բարբառներում «գոյ» և «կոյ» նշանակում են «ահա». օրինակ «գօ իկ ասեմ — ահա գալիս եմ, կօ պոնես եմ — ահա բռնում եմ, կօ կ'արթաս եմ — ահա կարդում եմ, գօ կ'արթաս եմ — ահա կարդում եմ»:

Հետևաբար «գօ» և «կօ» բառերը, որ գո և կալ = լինել բառերն են, նշանակել են «ահա». դրանք կարող են շարունակական իմաստ տալ ներկային, ինչպես որ տեսնում ենք Խոյի և Ուրմիայի բարբառներում:

«Կը» ճյուղի բարբառների մեջ, սակայն, նկատում ենք նաև մի ուրիշ ձևի ներկայի կազմություն: Այդ կազմությունը մենք գտնում ենք Քեսաբի բարբառում: Այդ բարբառում խոնարհումը կատարվում է հետևյալ կերպ.

Հայ արեմ, հայ արես, հայ արի, հայ արենմ, հայ արրօք, հայ արեն = ապրում եմ, ապրում ես, և այլն: Հա կրիմ, հա կրիս, հա կրի, հա կրինմ, հա կրիմ, հա կրին = գրում եմ, գրում ես և այլն. հա զարքում, հա զարքուս, հա զարքու = կարդում եմ, կարդում ես և այլն:

Նշանակում է՝ Քեսաբի բարբառը իր ներկան կազմում է ոչ թե «կը», այլ «հա» մասնիկով, որ հավասար է «կա» և «գօ» բառերին: Իսկ մենք վերևում ասացինք, որ «կա» և «գօ» բառերը խոնարհման մեջ նշանակում են «ահա»: Պարզ է, որ այդ «հա» մասնիկը հայերեն «ահա» բառն է, այդ պատճառով էլ «հայ արրեմ» նշանակում է «ահա» ապրեմ—ապրում եմ: «Ահա» ձևը, ինչպես ենթադրում է պրոֆ. Հ. Աճառյանը³, կրճատվում է մինչև «ա», ուստի Մալաթիայի բարբառի շարունակական ձևի մեջ այդ «ա»-ն նույն «ահա» բառն

¹ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 218: Հիշված ենթաբարբառներում «ոյ»-ի վերածումը «ա» ձայնավորի նկատված չէ, որպեսզի ենթադրենք թե դա հնչյունափոխության արդյունք է:

² Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1932, էջ 316—336:

³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. II, էջ 346:

է (քրիմ ա, քրիս ա, քրի ա...=գրում եմ, գրում ես, գրում է... կամ՝ քրեի ա, քրէիր ա, քրէր ա... այսինքն՝ քրէի ահա, քրէիր ահա, քրէր ահա—գրում էի, գրում էիր, գրում էր)։

Մենք մի այլ աշխատությունում այն կարծիքն էինք հայտնել, թե Մալա-Յիայի բարբառը ժխտականը կազմում է արտասովոր կերպով. իս չէմ ԲԵՆԵՐ ա; բուն չէս ԲԵՆԵՐ ա և այլն, մինչդեռ այստեղ արտասովոր բան չկա, այդ սչա-նակում է պարզապես՝ ես չեմ գրել ահա, դու չես գրել ահա և այլն։

«Ահա» բառով է կազմում իր ներկան նաև Արարկիրի բարբառը, որն այդ «ա»-ն սղում է և վերածում «ը»-ի։ Այսպես՝ Արարկիրի բարբառով «գրիմ ք, գրիս ք, գրա նը», պետք է եղած լինի «գրիմ ահա, գրիս ահա, գրի ահա»։ Եր-րորդ դեմքի «ն»-ն առաջանում է միշտ այն ժամանակ, երբ խոնարհվող բայի ձևը վերջավորվում է ձայնավորով և կամ «ն» բաղաձայնով։ Այսպես՝ Արար-կիրի բարբառի անցյալի անկատարի առաջին դեմքը լինում է «գրէինը», որովհետև վերջավորվում է «ի»-ով (գրեի), իսկ հոգնակի երրորդ դեմքը լինում է «գրէիննը», որովհետև վերջավորվում է ն-ով, մինչդեռ մյուս բոլոր դեմքերում լինում է միայն «ը»։ Այսպիսով Արարկիրի բարբառն էլ Քեսաբի նման պատկա-նում է «ահա» ճյուղին։

Համշենի բարբառը շարունակականը կազմում է հետևյալ կերպ. չէս էզուշ ա, տուն էզուշ ա¹ և այլն— ես գալիս եմ, դու գալիս ես և այլն։

Այստեղ ես մենք ունենք «ահա» բառի կրճատված ձևը։

Ինչպես երևում է «ահա» բառը ներկա կազմելու համար օգտագործվել է որոշ բարբառներում «գոյ» և «կայ» բառերի փոխարեն, բայց ժամանակի ընթացքում բարբառների մեջ պահանջ է զգացվել տարբերակելու ընդհանրապես ներկան և գործունեության անմիջական ներկան, ուստի ընդհանրապես ներկա-յի համար օգտագործվել է «կը», իսկ «ահա» դարձել է շարունակական մաս-նիկ։ Մի երկու բարբառում «ահա» բառն իբրև ներկայի բառ-մասնիկ պահպան-վել է մինչև այսօր (Քեսաբ, Արարկիր)։

Կարծում եմ, որ հնարավոր է նիկումիդիայի շարունակականի «հայէ» (քրիմ հայէ— ահա գրում եմ) մասնիկ բառը բացատրել հայերեն «ահա է» կապակցությամբ։

Այսպիսով «կը» ճյուղի մեջ դաս բարբառները ճյուղավորվելու ընթացքում ընդհանուր լեզվի ներկայի և անցյալի անկատարի ձևերը պահպանել են իբրև ըզձականի ձևեր, իսկ ներկայի համար օգտագործել են դանազան հայերեն բառեր (գոյ, կայ, ահա), որոնք նշանակում են «կա», գոյություն ունի «ահա», որպեսզի դրանով տարբերակեն ըզձական ապառնիի ձևերը սահմանական ապառնիից։ Մեկ բարբառ, սակայն, ներկայի և անցյալի անկատարի ձևերով նույնն է գրաբարի հետ. դա Խոտրջուրի բարբառն է. օրինակ՝ տանիւ, տա-նիս, տանի— նշանակում են «տանում եմ», «տանում ես», «տանում է», կամ՝ նստիմ, նստիս, նստի— նստում եմ, նստում ես, նստում է, կամ՝ պառկիմ, պառկիս, պառկի— պառկում եմ, պառկում ես, պառկում է և այլն։ «կը» մաս-նիկը գործածվում է հազվադեպ կամ միայն ձայնավորներից առաջ (կասին, կելնեն և այլն)։

Նշանակում է «կը» ճյուղի բարբառները փաստորեն չորս ճյուղ են ներկա-յացնում, չորս տեսակ են՝ «կը», «կա», «ահա» և գրաբարակերպ, որոնցից

¹ Հ. Ահառյան, Քննություն Համշինի բարբառի, էջ 141։

² Նալյն տեղում, հատ. II, էջ 33--38։

հաղթել է «կը»-ն, ուստի բարբառների մեծ մասը պատկանում է «կը» ճյուղին, փոքրաթիվ բարբառները միայն պատկանում են «կա» և «ահա» ճյուղերին, մեկն էլ զրաբարակերպ ճյուղն է ներկայացնում:

Ուզում եմ առարկել Ա. Այտրնյանի այն սինգուլի դեմ, թե իբրև հայերենի բարբառներում «նոր պարերու մեջ եօր սաճկերեն մասնիկն եղած է կոր»¹:

Մեր կարծիքով դա հայերեն «գոյ որ» բառակապակցությունն է, ուստի «գրեմ գոր» նույնն է, թե «գոյոր գրեմ», այսինքն՝ հենց այս բուկերս գրում եմ: Դրա համար լավ ապացույց է այն, որ Ռոդոսթոյի բարբառը իր շարունակականը կազմում է կամ դօր, կամ դօ, կամ օր բառ-մասնիկներով. օրինակ (դու-դիմ գօր, գուդիմ, դօ, գուդիմ օր):

Ինչպես տեսնում ենք, լեզվաբանական սխալ ելակետները ծածկում էին սեր աչքերից մեր սեփական լեզվի բաղմաթիվ փաստերը և միայն ստախնյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ պայծառությամբ երևան են գալիս դրանք և շուտ տալիս մեր սխալ եզրակացությունները հայերեն լեզվի բոլոր հարցերի մասին, որոնց թվում նաև բարբառագիտական հարցերի մասին:

Երախտապարտ զգացումով ուսմունքի ստեղծողի հանդեպ՝ մենք կշարունակենք էլ ալելի մեծ ջանասիրությամբ մեր աշխատանքները սովետական լեզվաբանների ստեղծագործ ընտանիքում:

А. Гарибян

К классификации армянских диалектов

(Р е з ю м е)

В гениальных основополагающих своих трудах по вопросам языкознания товарищ Сталин разработал и развил ряд положений марксистско-ленинской теории, разгромил теоретические установки марризма и аракчеевский режим в области языкознания, разработал основы сталинского учения о языке, открыв тем самым широкий путь развития советского языкознания. В противовес ошибочной и немарксистской установке Марра о том, что каждый диалект является пережиточно сохранившимся самостоятельным языком, И. В. Сталин учит, что диалекты являются ответвлениями от общего языка и подчинены ему и что они «обслуживают народные массы и имеют свой грамматический строй и основной словарный фонд».

Гениальные лингвистические положения товарища Сталина разбили оковы марризма, наложенные и на армянскую диалектологию, и армянская диалектология, наряду с другими дисциплинами, получила возможность широкого развития.

В настоящей работе мы на основе гениальных лингвистических положений И. В. Сталина стремимся пересмотреть свои ошибочные представления по вопросам армянской диалектологии.

Оправдавший себя фактом обнаружения четвертой ветви армянских диалектов морфологический принцип классификации диалектов академика Р. Ачаряна выдержал проверку в теоретическом аспекте и послужил опорой для поисков новых армянских диалектов.

¹ Ա. Այտրնյան, նույն տեղում, էջ 76:

Однако метод работы в корне изменился.

Положение товарища Сталина о том, что диалекты являются ответвлениями от общего языка, требовало в корне изменить отношение к фактам армянских диалектов. В противовес ложным марровским толованиям, требующим искать их объяснение в давно несуществующих, разнородных племенных языках, сталинские положения требуют искать их в общеармянском языке, что и я попытался сделать. В процессе работы был обнаружен ряд новых диалектов ветви «с» и значительное количество диалектов ветви «кэ».

Вновь обнаруженные диалекты разрешили ряд проблем армянской диалектологии, имеющих также и общелингвистическое значение, о чем постараемся изложить в другой раз.

Для данной темы представляет большой интерес вновь обнаруженный диалект Кесаба, имевший пребывание на северо-восточном берегу Средиземного моря. Сам по себе этот диалект представляет большой лингвистический интерес и по своим характерным чертам значительно отличается от многих других армянских диалектов. Но значительный интерес для классификации армянских диалектов представляет образование форм настоящего и прошедшего несовершенного времен изъяв. накл. глаголов этого диалекта. Эти формы образуются с помощью форм настоящего времени древнеармянского языка с прибавлением в начале частички *h* $\rightarrow$ *h*а, отличающей этот диалект от всех других известных диалектов и ветвей. Вот картина спряжения:

Древнеарм. язык		Диалект Кесаба		Литературный яз.			
<i>րանեմ</i>	<i>մեմ</i>	<i>հա րանեմ</i>	<i>հա մեմ</i>	<i>րանում եմ</i>	<i>մեմ եմ</i>		
<i>րանես</i>	<i>մես</i>	<i>հա րանես</i>	<i>հա մեմէս</i>	» <i>ես</i>	» <i>ես</i>		
<i>րանէ</i>	<i>մայ</i>	<i>հա րանէ</i>	<i>հա մեմէ</i>	» <i>է</i>	» <i>է</i>		
<i>րանեմք</i>	<i>մեմք</i>	<i>հա րանեմք</i>	<i>հա մեմք</i>	» <i>ենք</i>	» <i>ենք</i>		
<i>րանէք</i>	<i>մայք</i>	<i>հա րանէք</i>	<i>հա մեմք</i>	» <i>էք</i>	» <i>էք</i>		
<i>րանին</i>	<i>ման</i>	<i>հա րանես</i>	<i>հա մեմ</i>	» <i>են</i>	» <i>են</i>		

По принципу морфологической классификации армянских диалектов данный диалект не уместается ни в один из известных четырех ветвей, следовательно, распределение армянских диалектов по четырем ветвям не исчерпывает вопроса. Ясно, что этот Кесабский диалект не может быть одиноким в своем роде. И действительно, к нему примыкает Арабкирский диалект, неправильно отнесенный к ветви «кэ», так как Арабкирский диалект спрягает без этого «кэ»

<i>ր'անիմ ր'</i>	<i>մեմ ր</i>
<i>ր'անիս ր</i>	<i>մես ր</i>
<i>ր'անի նր</i>	<i>մայ նր</i>
<i>ր'անիք ր</i>	<i>մայք ր</i>
<i>ր'անի նր</i>	<i>մայք ր</i>
<i>ր'անի նր</i>	<i>մայք ր</i>

1 *րանում եմ ե արեմ. մեմ եմ ե արեմ.*

К этому же Кесабскому диалекту примыкают частично также Мала-
тийский и Хемшинский диалекты и говор Асланбека Никомидийского
диалекта, образующие свои длительные формы настоящего времени не
с частицей *իր*, *իօր*, а с частичкой «ш», «հայէ».

Малат. д.	Никомид. д. (говор Асланб.)	Хемшин. д. (Джаникский говор)
<i>միամ ւ</i>	<i>զը միամ հայէ</i>	<i>յէս միուշ ւ</i>
<i>միաւ ւ</i>	<i>զը միաւ հայէ</i>	<i>տուշ միուշ ւ</i>
<i>միա յա</i>	<i>զը միա հայէ</i>	<i>էն միուշ ւ</i>
<i>միանք ւ</i>	<i>զը միանք հայէ</i>	<i>մէք միուշ ւ</i>
<i>միաք ւ</i>	<i>զը միաք հայէ</i>	<i>տուք միուշ ւ</i>
<i>միան ւ</i>	<i>զը միան հայէ</i>	<i>ընէք միուշ ւ</i>

Таким образом, в лице Кесабского и Арабкирского диалектов имеем
новую ветвь армянских диалектов, которую по отличительному признаку
образования принципиальных форм мы называем «ветвью «ш»».

Не представляет затруднения усмотреть в этой частичке «ш»
армянское слово «шш-вот, усеченными и редуцированными формами
которого являются «հш» (Кесаб. д.), «ը» (Арабк. д.), «ш» (Малат. д.),
«ս» (Хемш. д.) и *հայէ=հա է=шш է* (Никомид. д.).

К ветви «кэ» проф. Р. Ачаряна отнесены 24 армянских диалекта.
Однако исследование диалектов этой ветви обнаруживает, кроме выше-
упомянутого, еще два типа образования форм наст. и прош. несов. времен
изъяв. наклонения.

Один тип образует эти принципиальные формы с помощью ча-
стичек *զու*, *զօ*, *իու*, *զը* > *իր* > *իու*. К этому типу относится подавляю-
щее большинство диалектов, отнесенных к ветви «իր». В этих ча-
стичках мы имеем чередующиеся формы слова *զոյ* (>*իու*>*իու*>*իր*),
что означает «есть», «имеется».

Второй тип образует те же формы с помощью *զա* > *իա* || *զօ* > *զու*.
Частичка *զօ* > *զու* встречается в тех диалектах, в которых подударная
«а» > «ш» переходит в «о» > о || п. Таким образом, мы имеем:

Амасийский д. *նստիմ իա*, *խմիմ իա*, *մնամ իա* и т. д.

Кесарийск. д. *զա զիզէնաւ*, *զա մուրա*, *զա միա* и т. д.

Киликийск. д. *զո իրէյիմ*, *զո զայառմ*, *զո մնոմ* и т. д.

В этих чередующихся частичках мы имеем армянское слово «իա»,
означающее «имеется», «есть».

Следовательно, эти две группы диалектов, используя древнеармян-
ские формы наст. и прош. несов. времен изъяв. накл. в функции жела-
тельного наклонения, прибавляют к ним слово «զոյ» или «իա» («есть»,
«имеется»), чтобы придать им смысл изъяв. наклонения, а именно: *զոյ*
զրիմ я есть пишу (букв.), *իա զրիմ* я есть пишу (букв.).

Таким образом, в лице диалектов, образующих принципиальные фор-
мы с помощью чередующихся форм армянского слова «զոյ», имеем одну
ветвь, а в лице диалектов, образующих те же формы через армянское
слово «իա», имеем другую ветвь.

Так разрешается также и долгий спор, существовавший вокруг толкования глагольной частицы «*հր*»¹.

Одновременно это значит в самой ветви «*հր*» мы имеем три ветви: «*հր*» (*հր*), «*հш*» и «*հш*», из коих ветвь *հր* (*հր*) является подавляюще сильной, подвергшей своему влиянию две другие ветви.

В итоге же на основе морфологической классификации мы обнаруживаем шесть ветвей армянских диалектов взамен трех, предложенных Р. Ачаряном в 1909 году, или четырех, предложенных мною в 1939 году.

Седьмую ветвь составит обнаруженный Р. Ачаряном Хотурджурский диалект, имеющий тождественные с древнеармянским языком формы наст. и прош. несов. времен изъяв. накл.: др. арм. формы: *qrhuf*, *qrhu*, *qrh...* *ihuhuf*, *ihuhu*, *ihuh...* > *qrhuf*, *qrhu*, *qrh...* *ihuhuf*, *ihuhu*, *ihuh...*

Этот диалект пока остается в единственном числе. Правда, ряд говоров Араратского диалекта в прошедшем несовершенном времени изъяв. накл. обнаруживает тождественные формы с древнеармянским языком, но их отнести к этой ветви нельзя.

Так, в результате применения сталинских положений о диалекте открываются новые горизонты перед армянской диалектологией. И надо признать, что мы находимся лишь в начале пути к этим широким сталинским горизонтам науки.

¹ См. А. Айдинян, М. Абелиян и др.